ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Մատենադարան
Библіотека

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՑԵԽԱՅԻՆ ՎԱՐՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԽ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՑԵԽԱՅԻՆ ՎԱՐՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ,—ՅԵՐԵՎԱՆ, 1930

Հր. № 1310։ Գրառեպվար № 5186 (բ)։ Տիրաժ 2000։

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում։
Պատվեր № 81։

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՑԵԽԱՅԻՆ ՎԱՐՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՑԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Ցեխային վարպետը՝ ձեռնարկության տեխնիկական ղեկավարի անմիջական հսկողության ու ղեկավարության ներքո վարում է իր խնամքին հանձնված ցեխի բոլոր վարչա-տեխնիկական ու տնտեսական աշխատանքը. մասնավորապես նրա պարտականությունների մեջ են մտնում.—

ա) Ցեխային կարգերի ընդհանուր սիստեմի հիմունքով՝ գործարանի վարչության կողմից ստացված հրահանգների, ծրագրերի և առաջադրությունների կատարումը.

բ) Աշխատանքների բաշխումը, պատրաստելու կամ մշակելու յեղանակների ու գործառնությունների հաջորդականության սահմանումը.

գ) Արտադրության վարելը—այն ուղղությամբ, վոր արտադրանքի քանակը մեծանա, վորակը լավանա և ինքնարժեքն իջնի։

2. Ցեխի վարպետը հսկում է.—

ա) Արտադրության անընդհատ ընթացքի ու սար-

քավորման կանոնավոր բեռնավորման, ստանոկների ու բանվորների վրա.

բ) Պարապուրդների կրճատման ու նրանց ճիշտ հաշվառման վրա.

գ) Տեխնիկական սարքավորումը պահպանելու և պարտ ու պատշաճ վիճակում պահելու վրա, նմանապես և այն հումույթի, կիսաֆաբրիկատների և նյութեղենների վրա, վորոնք նրա հսկողության տակ են գտնվում.

դ) Հումույթի, կիսաֆաբրիկատների, օժանդակ նյութեղենների և գործիքների պաշարների սահմանված նորմաների պահպանման վրա.

**Ծանոթություն**— *Ցեխում պաշարների նկատմամբ սահմանված նորմաներից դուրս յեղած նյութեղենների ավելցուկների համար պատասխանատվությունն ընկնում է ցեխի վարպետի վրա։*

յե) Հումույթի, նյութեղենների, վառելիքի, էներգիայի (առավելագույն չափով օգտագործելով մնացորդները, կտրվածքները և փչացածները) տնտեսաբար ու նպատակահարմար ծախսման և բանուժի ու բրակի տոկոսի կրճատման վրա.

զ) Սահմանված պաշտպանման և նախազգուշացման միջոցների ճիշտ օգտագործման ու տեխնիկական անվտանգության և ֆաբրիկա-գործարանային կանոնների պահպանման վրա, իր ցեխի առողջապահության վրա և ժամանակին միջոցներ է ձեռք առնում յերևան յեկած թերությունները ուղղելու համար.

է) Հսկում է, որ բանվորները ծանոթանան սարքավորմանը, պաշտպանմանն ու հարմարություններին.

ը) Արտադրական աշխատանքային դիսցիպլինայի պահպանության վրա, ղեկավարվելով ներքին կառավարման կանոններով։

3. Ցեխի վարպետն իրավունք ունի անհրաժեշտության դեպքում փոխադրել բանվորներին մի աշխատանքից մյուսը՝ իր ցեխի սահմաններում, աշխատանքը նրանց մեջ բաշխելով ըստ նրանց որակավորման։

4. Ցեխի վարպետն ստացված առարկաներն ընդունում է ըստ նրանց որակի, բացի դրանից նա իրավունք ունի չընդունելու անպետք առարկաները, քանի դեռ հատուկ գրավոր կարգադրություն չի ստացել տեխնիկական ղեկավարից։

5. Ցեխի վարպետը մասնակցում է տվյալների նախապատրաստման գործին՝ իր ցեխի արտադրական ծրագիրը կազմելու համար, կատարման ժամկետները, ցեխային ու նախահաշվային ինքնարժեքի չափերը որոշելու համար, նմանապես մասնակցում է՝ հումույթ, կիսաֆաբրիկատներ, բանվորական ուժ, գործիքներ, արտադրական և օժանդակ նյութեղեններ և այլն մատակարարելու խնդիրներին։

6. Ցեխի վարպետն իրավունք ունի տեխնիկական ղեկավարի գրավոր թույլտվությամբ հաստատված ծրագրերի և նախահաշիվների սահմաններում տալ պատվերներ ու պահանջներ ձեռնարկության մյուս մասերում համապատասխան նորոգություններ անելու, օժանդակ աշխատանքներ կատարելու, արտադրական և օժանդակ նյութեղենների, գործիքների և այլն—

պաշարը լրացնելու և հսկելու, վոր այդ բանները ժամանակին կատարվեն։

7. Ցեխի վարպետը պարտավոր ե ծանոթանալ արտադրանքի ցեխային ինքնարժեքի նախնական ու հետագա կալկուլյացիային, վոր սահմանել ե ձեռնարկության պատշաճ բաժինը (կամ մասը) և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել նկատված բացերն ու անկանոնությունները վերացնելու համար։

8. Ցեխի վարպետը մասնակցում ե արդֆինպլանների մշակմանը և տեխնիկական արտադրական ցուցանիշները սահմանելուն, ինչպես, որինակ, արտադրանքի չափերի, հումույթի ծախսերի, վառելիքի, աշխատանքի արտադրողականության, ինքնարժեքի ցուցանիշները սահմանելուն և այլն։

9. Ցեխի վարպետը մասնակցում ե աշխատանքի եկոնոմիկայի բաժնի (ОЭТ) նորմաների մշակմանը և առանձին գնահատություններին, ցեխային հաստիքները մշակելու և սահմանելու գործին։

10. Ցեխի վարպետը պարտավոր ե ամեն ամիս հաշիվ ներկայացնել ցեխի գործունեության մասին՝ գործարանի վարչության վորոշած ձեվով։

11. Ցեխի վարպետը պարտավոր ե մասնակցել արտադրական կոմիսիաների (խորհրդակցությունների) աշխատանքներին և տեխնիկական ղեկավարի սանկցիայով կենսագործել նպատակահարմար ռացիոնալ առաջարկությունները՝ հաստատված գումարների սահմաններում։

12. Ցեխի վարպետը պարտավոր ե՝ ցեխային, կուսակցական և արհեստակցական կազմակերպությունների ժողովներում ու նիստերում,—նախապես ժամկետի ու կարգի մասին համաձայնության գալով նրանց հետ,—զեկուցումներ տալ ցեխի արտադրական աշխատանքի հիմնական խնդիրների մասին (արտադրական պլաններ, ցեխային նարյադներ, ռացիոնալացում, աշխատանքի պայմանների բարելավում, բանվորների առաջարկների կատարում և այլն), նըշված կազմակերպություններին հնարավորություն տալով նախապես ծանոթանալու անհրաժեշտ մատերիալներին, այդ խնդիրների քննությանն ակտիվորեն մասնակցելու համար։

13. Ցեխի վարպետի բոլոր գործառնական—տնտեսական կարգադրությունները պարտադիր են ցեխի բանվորների և ծառայողների համար՝ անկախ նրանց կուսակցական, արհեստակցական կազմակերպությունների մեջ ունեցած դիրքից։

14. Ցեխի վարպետը պատասխանատու չե իր խնամքին հանձնված ցեխի ամբողջ տնտեսական-արտադրական գործունեության համար։

---

# ՏԻՊԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՑԵԽԻ ՄԱՍԻՆ.

§ 1.

Արտադրական ոժանդակ ցեխերը, ձեռնարկության բաժինները կամ մյուս մասերը և կողմնակի արտադրությունները հանդիսանում են ինքնուրույն միավորներ՝ ցեխային նարյադների սիստեմի հիման վրա— գործարանի վարչությունից ստացած առաջադրությունների և հրահանգների կատարման սահմաններում։

§ 2.

### Ցեխային նարյադները

Համապատասխան գործարանի վարչության տարեկան (ընդհանուր գործարանային) արդֆինպլանի հաստատման՝ կազմվում են տարեկան բաժանումով և ըստ կվարտալների ամեն մի վորոշյալ ժամանակի համար միասնական ցեխային նարյադներ և հանձնվում են ցեխերին, բաժանմունքներին և ձեռնարկության արտադրական մյուս մասերին։

Այդ նարյադների մեջ վորոշվում են.—



ա) Ցեխի պատրաստած արտադրանքի և կիսաֆաբրիկատի քանակը, վորակը և կատարման ժամկետները.

բ) Տեխնիկական պլանը (հաշվարկումների գործակիցները, բանվորական գծվածքները) և տեխնիկական սպեցիֆիկացիան.

գ) Տեխնոլոգիական պլանը (մշակման մեթոդները).

դ) Նյութեղենների, բանվորական ուժի, էներգիայի և հումույթի ծախսերի նորմաները, չվերջացրած արտադրության, հիմնական, միջակ և ընթացիկ վերանորոգման լիմիտները, նյութեղենի պաշարների նորմաները և ռացիոնալացման գումարները.

յե) Նախահաշվային ինքնարժեքը ըստ էլեմենտների ծախսումների։

**Ծանոթություն.**— Ցեխային նարյադների տեխնիկական-տնտեսական ցուցանիշները և նախահաշվային ինքնարժեքը բաժանվում են ըստ արտադրության առանձին ֆազերի և ժամանակաշրջանների—ցեխի ներսում։

Ցեխային նարյադներն անպայման պետք է համաձայնեցվեն տեխնիկական ղեկավարի և ցեխի վարչետի հետ։

§ 3.

### Տեխնիկական ղեկավարություն

Ցեխի գործունեության տեխնիկական ղեկավարությունն իրագործվում է հետևյալ ճանապարհով.—

ա) Անհրաժեշտ միջոցներ և ձեռնարկումներ պատրաստելով, վորոնք պետք է ապահովեն արտադրության ճիշտ ու տնտեսաբար կատարումը ցեխում և

բ) Ցեխի տեխնիկական կոնսուլտացիայի ու հրահանգման ճանապարհով՝ նարյադը կատարելու պրոցեսում։

**Ծանոթություն 1.**—Ցեխին տրված նարյադների կատարման գնահատությունն ու վերահսկողությունն իրականացվում է գործարանի վարչության օրգանների կողմից՝ հաշվային կալկուլյացիաների վերլուծության և հիշյալները նախահաշվային կալկուլյացիաների հետ համեմատելու միջոցով, այլ և ցեխի աշխատանքների պլանային ու փաստական տեխնիկական-տնտեսական ցուցանիշների համեմատությամբ (պրոգուլներ, պարապուրդներ, բրակ և այլն)—արտադրանքի որակի պահանջները կատարելու անհրաժեշտ պայմանով։

**Ծանոթություն 2.**—Հաշվետվական ինքնարժեքը նախահաշվային ինքնարժեքի հետ համեմատելիս պետք է ուշադրության առնել բոլոր շեղումները, որոնք բղխում են առաջադրությունների, բանվորական գծվածքների փոփոխություններից, այլ և նրանցից, որ ցեխին հումք, նյութեղեններ, բանուժ, էներգիա և այլն մատակարարվում է վատորակ, անժամանակ ու սահմանված նորմաների հակառակ թերի կերպով, նմանապես մատակարարման այս տեսակների համար պայմանավորված գների փոփոխություններից։

## § 4.

## Աշխատանքի կատարման նարյադը ցեխում

Ցեխի ներսում նարյադ կատարելու համար անհրաժեշտ միջոցների նախապատրաստումը, նարյադի բաշխումը ըստ առանձին ագրեգատների և մեքենաների, տվյալ առաջադրությունների կատարման հսկողությունը, ցեխում տեղի ունեցած հումքի, կիսաֆաբրիկատների և պատրաստի արդյունքների շարժումների



ընթացքի ղեկավարությունը—գործադրում է ցեխի վարպետի կամ մի հատուկ անձնավորության շուրջը կազմակերպված բաշխման բյուրոն։

**Ծանոթություն.**—Փոքր ցեխերում նշած բաշխման ֆունկցիաները կատարում է ցեխային պերսոնալի անդամներից մեկը։

Յուրաքանչյուր ցեխ արտադրական գործողությունների բնույթի և մեխանիկական կառուցվածքի տեսակի համաձայն բաժանվում է ըստ մեքենաների կոմպլեկտների կամ խմբերի և բանվորական տեղերի, որոնց սպասարկում են առանձին, նրանց կցված բանվորական բրիգադները՝ հրահանգիչների, բրիգադիրների, ավագ բանվորների ղեկավարությամբ և այլն։

Բրիգադային հրահանգիչների հիմնական խնդիրներն այն են, որ նրանք ունենան տեխնիկական ղեկավարություն, վերստուգում կատարեն և հսկեն այն առաջադրությունների կիրառման վրա, որոնք ստացվում են ցեխի բաշխման բյուրոյի կողմից։

## § 5.

## Արտադրության ռացիոնալացման օրգանները

Արտադրության ռացիոնալացման պլաններն ու մեթոդները մշակվում են ռացիոնալացման ընդհանուր գործարանային օրգանի կողմից՝ գործարանային վարչության շահագրգռված բաժանմունքների մասնակցությամբ։ Ցեխի ներսում առանձին աշխատանքների օբյեկտների ընտրությունը և նրանց իրականացման պլանի մշակումը կատարում է հենց այդ օրգանը՝ ցեխի վարպետի հետ միասին։ Ռացիոնալացման վերաբերմամբ նշած պլանով՝ ռացիոնալիզատորական ձեռնար-

կումների անմիջական իրականացումն անում է ցեխի վարպետը՝ այդ նպատակի համար հատկացված գումարների սահմաններում։

§ 6.

## Տեխնիկական վերահսկողություն

Տեխնիկական վերահսկողությունը կատարվում է գործարանային վարչության հատուկ օրգանի կողմից, որն իր կոնտրոլային աշխատանքը կենտրոնացնում է հատկապես որակի վրա՝ սկսած հումույթից մինչև պատրաստի արտադրանքը, պարզելով բրակի պատճառները արտադրության բոլոր ֆազերում ու վերափոխումներում, և հսկում է արտադրության տեխնոլոգիական պրոցեսին։

Տեխնիկական կոնտրոլին իրավունք է վերապահվում ցեխի վարպետի միջոցով ընդհատել արդյունքների մշակումը և մանրամասնությունների մշակումը, յեթե նա նկատել է, որ մատերիալների այդ մշակումը կամ հատկությունն անխուսափելիորեն բրակ կառաջացնեն։

§ 7.

## Ձեռնարկումներ աշխատանքի բնագավառում

Տվյալ ցեխին վերաբերող ձեռնարկումներն աշխատանքի բնագավառում՝ իրագործվում են անպայման համաձայնեցնելով ցեխի վարպետի հետ—մասնավորա-



պես աշխատանքի նորմաների և առանձին գնահատումների մշակումը և սահմանումը, գործարանային ԳԿՀ-ի աշխատանքը, ցեխային հաստիքների որոշումը և այլն։

§ 8.

## Հիմնական, միջակ ու ընթացիկ վերանորոգում

Հիմնական ու միջակ վերանորոգումը կատարվում է նախազգուշացման կարգով, արտադրական ցեխերի նախապես արած պահանջների հիման վրա (հիմնավորված տարեկան պլանով) հատուկ վերանորոգության ցեխի կողմից, որ գործում է սույն կանոնադրության ընդհանուր հիմունքներով։

Ընթացիկ վերանորոգումը կատարվում է վերանորոգության ցեխի կամ վերանորոգության բրիգադների, իսկ առանձին դեպքերում ցեխի միջոցներով՝ առանց հատուկ բրիգադայի։ Ընթացիկ վերանորոգումների կատարման բաշխումը՝ վերանորոգության և հիմնական ցեխերի միջև, այլ և նրանց օգտագործման կարգը որոշվում է առանձին հրահանգով, որ հաստատված է ձեռնարկության վերատեսչի կողմից։

§ 9.

## Հաշվառք ու հաշվետվություն

Ձեռնարկության մեջ հաշվառքը և հաշվետվությունը կատարվում է այն սիստեմով, որ ապահովվի ցեխի գործունեության արտաբերելը արտադրության առանձին ֆազերի և վերափոխումների համաձայն։

Հաշվետվության և գործառնական տեղեկությունների ձևերը, հրահանգները և ժամկետները որոշում է ձեռնարկության վերատեսուչը։

Ծանոթություն.—Ձեռնարկություններում և ցեխում տեղեկությունների ձևերը սահմանվում են այն հաշվետվությունների ձևերի հիման վրա, որ տրվում է ԽՍՀ Միության Ժողովրդ. Տնտ. Գերագ. Խորհրդի կողմից ԽՍՀՄ-ի Բանգյուղտեսչության ժողկոմի համաձայնությամբ։

Մի ամսվա ընթացքում կատարված ծախսերը (սըրանց թվում նաև ամորտիզացիայի մասը և վերադիր ծախսերը) համեմատվում են ըստ պլանի նախահաշվային առաջադրությունների հետ՝ այնպես, որ ցեխային պերսոնալը, արտադրական կոմիսիաները և բանվորները ապահովապես հնարավորություն ունենան հետևելու աշխատանքի հանրագումարներին՝ ըստ իրենց ցեխի արտադրության առանձին փազերի և վերափոխումների։

§ 10.

Գործարանային վարչության բաժինների ֆիլիալները կամ ցեխում իրենց աշխատանքը տարող առանձին աշխատողները—համաձայնության են գալիս ցեխի վարպետի հետ՝ աշխատանքի նկատմամբ։

Նշված աշխատողները յենթարկվում են ցեխում սահմանված ներքին կարգ ու կանոնին։

§ 11.

Ձեռնարկության արտադրական ոժանդակ ցեխերի, բաժանմունքների և այլ մասերի վարչությունը—ադմինիստրացիան—անմիջապես յենթարկվում է ձեռնարկության վերատեսչին։

1222

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0624983

(204.)

Կաս
1222

# ПОЛОЖЕНИЕ
# ПРАВАХ И ОБЯЗАННОСТЯХ ЦЕХОВОГО МАСТЕРА

Госиздат ССР Армении

Эривань, 1930 г.

Գինն է 3 կոպ. (Մ. 1 ժ.)